02

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

5 (1404) • 8 փետրվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Անակնկալ այցելություններ ոստիկանության ստորաբաժանումներ

Փետրվարի 6-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն անակնկալ այց կատարեց ճանապարհային ոստիկանության Երեւանի հաշվառման քննական ստորաբաժանում:

Վալերիյ Օսիպյանը զրուցեց մեքենա հաշվառող քաղաքացիների հետ, լսեց նրանց կարծիքը մատուցվող ծառայությունների մասին: Ոստիկանության պետը հետեւեց հերթերի կանոնակարգմանը, ոստիկաններից պարզաբանումներ պահանջեց ծառայության վերաբերյալ:

Ոստիկանության պետը զրուցեց նաեւ այդ պահին վարորդական վկայական ստանալու համար քննություն հանձնող քաղաքացիների հետ ու հետեւեց քննության ընթացքին:

Այցի շրջանակում Վալերիյ Օսիպյանը շրջեց ստորաբաժանման տարածքում, արեց դիտողություններ ու տվեց կոնկրետ հանձնարարականներ՝ թերությունները վերացնելու ուղղությամբ:

Նույն օրը ոստիկանության պետն անակնկալ այցեր կատարեց նաեւ ոստիկանության Էրեբունու եւ Կենտրոնական բաժիններ, անձնագրային եւ վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունք, շրջեց ստորաբաժանումների բոլոր ծառայություններում, զրուցեց քաղաքացիների հետ:

Այցերի ընթացքում Վալերիյ Օսիպյանը մատնանշեց թերություններն ու բացթողումները, ցուցումներ տվեց կարճ ժամանակում վերացնել դրանք ու քաղաքացիներին մատուցել ավելի բարձրորակ ծառայություն:

Ոստիկանության պետի անակնկալ այցերը կրելու են շարունակական բնույթ:

Ավազակություն եւ առեւանգում

Փետրվարի 2-ի գիշերը ոստիկանության Մալաթիայի բաժնում ահազանգ ստացվեց: Տաքսի ծառայություններից մեկի հեռախոսավարուհին տեղեկացնում էր, որ վարորդներից մեկը զանգել ու հայտնել է, որ Հարավարեւմտյան թաղամասում ուղեւորն իրեն դուրս է գցել ու մեքենան փախցրել:

Ոստիկանները ճշտեցին դեպքի վայրը, ուր անմիջապես օպերատիվ խումբ մեկնեց: Ըստ տաքսու վարորդի՝ ուղեւորը մեքենան նստել էր Նոր Նորքի 5-րդ զանգվածում եւ խնդրել ուղեւորվել Հարավարեւմտյան Ա-3 թաղամաս: Սեբաստիայի փողոցում պահանջել էր ուղղությունը փոխել դեպի համայնքապետարան: Հասել էին Օտյան փողոց, ուղեւորը թիկունքից ինչ-որ առարկա էր պահել վարորդի կոկորդին ու փող պահանջել: Վարորդը մերժել էր ու դիմադրել:

Ձեռնարկվեցին անհետաձգելի օպերատիվ-հետախուզական եւ փնտրողական միջոցառումներ: Պարզվեց առեւանգված մեքենայի ընթացքի հետագիծը: Այն հայտնաբերվեց վթարված վիճակում. Օհանովի փողոցում բախվել էր ավտոտնակի:

Մեքենայում հայտնաբերվեցին արյան հետքեր, նաեւ՝ կոտրված դանակի բռնակ ու շեղբ, հանցագործությունը կատարած անձի գլխարկը:

Ոստիկանները ձեռնարկեցին ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ: Բացահայտման աշխատանքներում էական նշանակություն ունեցավ այն տեղեկությունը, որ ուղեւորը սկզբում վարորդին պատվիրել էր մեկնել Հարավարեւմտյան Ա-3 թաղամաս:

Նույն օրը հայտնաբերվեց համաներմամբ վերջերս ազատության մեջ հայտնված Մամիկոն Սարգսյանը:

Քննությունը շարունակվում է:

Հետախուզվողներն արտահանձնվեցին

ՀՀ ոստիկանության աշխատակիցները ծավալուն ու համակարգված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, փոխգործակցելով Վրաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գործընկերների հետ, 2017 թվականի հոկտեմբերի 19-ին Վրաստանում հայտնաբերեցին Ալբերտ Բլբուլյանին ու Արմեն Կարադավիդովին: Նրանք 2017 թ. սեպտեմբերի 15-ից հետախուզվում էին մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության, երկու կամ ավելի անձանց սպանության փորձի եւ ապօրինի կերպով զենք-զինամթերք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու մեղադրանքով:

Արմեն Կարադավիդովի եւ Ալբերտ Բլբուլյանի հայտնաբերումը վրաց գործընկերների հետ արդյունավետ համագործակցության դրվագներից է: Փետրվարի 5-ին նրանք արտահանձնվեցին Հայաստան:

էջ 6

Չարաշահել է լիազորությունները

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները տեղեկություններ էին ստացել, որ Վերին Արտաշատ համայնքում գործող ռեստորանային համալիրը անօրինական գործունեություն է ծավալում՝ խախտելով հարակից տարածքում ապրողների իրավունքները:

Պարզվեց՝ ռեստորանային համալիրը գործունեությունը ծավալում է առանց համապատասխան թույլտվության: Սեփականատերը գործունեությունն օրինականացնելու նպատակով 2017 թ. հուլիսին Վերին Արտաշատ համայնքի ղեկավարին դիմում էր ներկայացրել: Համայնքի ղեկավարը, տեղյակ լինելով նրա ֆինանսական խնդիրներին, ընդառաջել էր եւ ռեստորանային համալիրի ապօրինի գործունեությունը կասեցնելու կամ օրինականացնելու ուղղությամբ գործողություններ չէր ձեռնարկել:

Հարուցվել է քրեական գործ:

Սպանել էր եղբորը

Փետրվարի 3-ին ոստիկանության Թալինի բաժնում տեղեկություն ստացվեց, որ Նոր Արթիկ-Բագրավան ճանապարհին ոմն Ժիրո դանակահարել է եղբորը:

Դեպքի վայրում ոստիկանները հայտնաբերեցին «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենա՝ արյան հետքերով: Ո՛չ տուժողը կար, ո՛չ դանակահարողը: Որեւէ հիվանդանոցից կատարվածի վերաբերյալ ոստիկանությունում հաղորդում չստացվեց:

Պարզվեց, որ ոմն Ժիրոն Արագածավան գյուղի բնակիչ Ժիրայր Նազարեթյանն է, եղբայրը՝ Ղեւոնդ Նազարեթյանը: Եղբայրները մեքենայում վիճել էին, Ժիրայրը դանակահարել էր Ղեւոնդին, եւ քանի որ «06»-ի վառելիքը վերջացել էր, անցորդներից մեկի մեքենայով եղբորը Բագրավան գյուղ՝ հարազատներից մեկի տուն էր տեղափոխել, որտեղ էլ նա մահացել էր:

Քրեական հետախույզները Ժիրայր Նազարեթյանին Բագրավանում հայտնաբերեցին եւ բերման ենթարկեցին ոստիկանության Թալինի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

Դանակահարել էր հորաքրոջը

Փետրվարի 2-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնում էր, որ ինքը «Հայկոոպ» բազայի մոտ դանակով մարդ է վնասել:

Նույն օրը հիվանդանոցից ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում ստացվեց, որ կրծքավանդակի կտրած-ծակած թափանցող վերքով «շտապօգնության» խումբը բուժօգնության է տեղափոխել 62-ամյա Վեներա Մ.-ին: Ըստ նրա հայտարարության՝ վնասվածքը ստացել էր Արին-Բերդի փողոցի տներից մեկում:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ նշված տանը, վիճաբանության ժամանակ, Կարեն Մ.-ն դանակահարել է հորաքրոջը՝ Վեներա Մ.-ին:

Կարեն Մ.-ն բերման է ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին:

Կատարվում է քննություն:

«Մեքենայական» խարդախություններ

Հետախուզման մեջ գտնվելով՝ նա դարձյալ խարդախությամբ մեքենա էր հափշտակել:

էջ 2

Հայտնաբերվեց սահմանին

Մինչ կասկածյալի ինքնությունը պարզվեց, նա արդեն լքել էր հանրապետության տարածքը:

էջ 3

Սպանություն Չրվեժում

Դանակահարված ու արնաքամ երիտասարդը տեղափոխվել էր հիվանդանոց, որտեղ մահացել էր:

էջ 6

Պահպանելով անվտանգության կանոնները

Անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանք թողարկելն ու վաճառելը, ինչպես եւ աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը քրեորեն պատժելի արարք է, մինչդեռ մեր հայրենակիցներից շատերն ինչ-որ անպատասխանատու մարդկանց, նրանց անփույթ աշխատանքի պատճառով ստացած վնասի հատուցումը չեն պահանջում օրենքի չիմացության պատճառով: Չպատժված անփույթն ու անպատասխանատուն էլ շարունակում են նույնքան անորակ աշխատանք կատարել կամ ապրանք թողարկել՝ արհամարհելով սպառողի շահերը:

Քրեական օրենսգրքի 279 հոդվածի նկարագրական մասում ասվում է՝ սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ իրացնելը, աշխատանքներ կամ ծառայություններ մատուցելը, եթե անզգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը, ենթարկվում է համապատասխան պատժի:

Օրենքը, պատճառված վնասի չափից ելնելով, տարբեր պատիժներ է սահմանում: Պատիժն առավել խիստ է, եթե, ասենք, անվտանգության պահանջներին չհամապատասխանող աշխատանքի կամ ծառայության պատճառով մահ է առաջացել, կամ եթե նման վերաբերմունք դրսեւորվել է մանկահասակների համար նախատեսված ապրանքներ պատրաստելիս կամ աշխատանք կատարելիս:

Օրենքը միշտ տուժողի կողքին է, պաշտպանում է նրա շահերը, եթե տուժողն իր իրավունքների մասին իրազեկված է, եթե անտարբեր չի լռում, երբ անորակ աշխատանքը կամ ապրանքը պատճառել են վնաս:

Անվտանգության պահանջներին չհամապատասխանող աշխատանք կատարողները, ցավոք, քիչ չեն, այդպիսիներին պատասխանատվության չենթարկելը մեծ առումով նշանակում է, որ բարձրորակ սպասարկման մասին դեռ պիտի տեւական ժամանակ երազենք:

Չմեռնամուտին, Ամանորի տոներից առաջ գազասպասարկման ծառայություններն ակտիվանում են: Տեսուչներն այցելում են բնակարաններ, ստուգում գազասարքավորումներն ու, ինչ-որ գրառումներ անելուց հետո, տանտիրոջը ստորագրել են տալիս՝ որպես իրենց այցի հավաստիք: Ինչ խոսք, գովելի է, եթե, իհարկե, այդ այցելությունները ձեւական բնույթ չկրեն, միայն իբր կատարած գործի մասին նշումներ չլինեն, եթե այդ գործը կատարվի պատասխանատվության գիտակցումով, խղճով:

Իսկ հիմա ներկայացնենք դեկտեմբերի 20-ից հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում արձանագրված մի քանի դեպք:

Նշված ժամանակահատվածում մայրաքաղաքում եւ մարզերում թունավորումների 56 դեպք է գրանցվել՝ գլխավորապես գազի արտահոսքի հետեւանքով:

Դեկտեմբերի 24-ի ուշ երեկոյան հիվանդանոցից ոստիկանության Բյուրեղավանի բաժանմունք ահազանգ ստացվեց, որ «շմոլ գազից թունավորում» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Բյուրեղավանի 65-ամյա մի բնակիչ: Նրա բնակության վայր մեկնած օպերատիվ խումբը լոգարանում հայտնաբերեց 29-ամյա որդու դիակը: Դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ երիտասարդի մահը ջրատաքացուցիչից արտահոսքի հետեւանքով առաջացած շմոլ գազից թունավորվելու հետեւանք էր:

Դեկտեմբերի 26-ի լույս գիշերը «Աշտարակ» բժշկական կենտրոն տեղափոխվեցին Ոսկեվազ գյուղի երկու բնակիչ: Տատ ու թոռ թունավորվել էին գազի կաթսայից արտահոսքի հետեւանքով: Դեկտեմբերի 29-ի գիշերը հիվանդանոց տեղափոխվեցին մայրաքաղաքի Վերին Շենգավիթ թաղամասի չորս բնակիչներ, ախտորոշումը՝ թունավորում շմոլ գազից: Նրանց բնակության վայրը՝ հայտնաբերելով արնանման հետքեր եւ «Կալաշնիկով» ինքնաձիգի կրակված պարկուճներ, քրեական հետախույզները պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ:

Նախնական տվյալներով՝ Արգիշտի Բրոյանի ոչխարները մտել էին հետագայում հիվանդանոց տեղափոխված անձանց հողատարածք եւ վնաս հասցրել: Իբրեւ վնասի հատուցում՝ տուժողները Բրոյանի ոչխարներից մի քանիսը վերցրել էի, Բրոյանն էլ, իմանալով այդ մասին, ազգականների հետ «Նիվա»-ով եկել էր ոչխարները հետ վերցնելու: Սկսված վեճի ընթացքում էլ մեքենայից վերցրել էր ինքնաձիգն ու կրակահերթ արձակել համագյուղացիների ուղղությամբ:

Քրեական գործ է հարուցվել:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Դարձյալ ջրատաքացուցիչից արտամղված շմոլ գազն էր: Նույն օրը շմոլ գազից թունավորումով հիվանդանոց էին տեղափոխվել մայրաքաղաքի Ազատամարտիկների փողոցի տներից մեկի երեք բնակիչ, որոնցից մեկը՝ վեց տարեկան երեխա: Գազի վառարանից արտամղված շմոլ գազից թունավորված երկու հոգի էլ հիվանդանոց էին տեղափոխվել Պռոշյան փողոցից:

Ամանորի գիշերը տոնական չէր Տաշիր քաղաքի մի բնակարանում: Գազօջախից գազի արտահոսքի հետեւանքով թունավորվել էին ընտանիքի բոլոր անդամները: Տոնը խաթարվեց նաեւ Ապարան քաղաքի մի ընտանիքում. գազի ծխատար խողովակից շմոլ գազը տուն լցվելու հետեւանքով թունավորվել ու հիվանդանոց էին տեղափոխվել տան երեք անդամները, որոնցից մեկը՝ ինը տարեկան: Տարեմուտի գիշերը շմոլ գազից թունավորումով հիվանդանոց տեղափոխվեցին նաեւ Շիրակի մարզի Գուսանագյուղ գյուղի մի ընտանիքի երեք անդամներ:

Տոնական օրերին հիվանդանոց տեղափոխվեցին խոհանոցում տեղադրված ջրատաքացուցիչից արտամղված շմոլ գազից թունավորված մարտունեցի երեք երեխաներ, Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի չորս բնակիչներ, Գավառ քաղաքի հինգհոգանոց ընտանիքի անդամներ, որոնցից երկուսը՝ մանկահասակ երեխաներ: Հունվարի 5-ին հիվանդանոց տեղափոխված հինգ գյումրեցիների թունավորման պատճառը խոհանոցում տեղադրված ջեռուցման կաթսայի թերայրման հետեւանքով առաջացած շմոլ գազն էր:

Չշարունակենք. երեսուն օրում՝ հիսուն դեպք: Անվտանգության կանոնները չպահպանելու, անպատասխանատվության, անտարբերության հիսուն օրինակ:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Մեքենայական» խարդախություններ

2018 թ. տարբեր ժամանակահատվածներում Կոտայքում, մայրաքաղաքի Էրեբունի, Ծենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքներում խարդախության դեպքեր էին գրանցվում: Ձեռագիրը նույնն էր: Ոմն Գրիգոր սոցիալական կայքերի միջոցով տեղեկանում էր, որ այս կամ այն քաղաքացին ցանկանում է վաճառել մեքենան, զանգում էր, համոզում մինչ վաճառելը վարձակալական հիմունքներով շահագործել տրանսպորտային միջոցը: Եվ երբ համաձայնում էին, իրականացվում էր գործարքը, մեկ այլ սոցիալական կայքում նույն մեքենայի վերաբերյալ ինքն էր վաճառքի հայտարարություն տարածում, գնորդ գտնում, գրանցումն ավելի ուշ անելու պատրվակով՝ կանխավճարի դիմաց հանձնում էր ուրիշի մեքենան ու անհայտանում:

2018 թ. մայիսին Էրեբունու վարչական տարածքի մի բնակչի «Օպել» մակնիշի մեքենան էր փորձել խաբեությամբ վաճառել: Նույն եղանակով հունիսին Աբովյանի մի բնակչի «ԲՄՎ»-ն էր վաճառել: Հոկտեմբերին Շենգավիթից խաբեությամբ դարձյալ «Օպել» մակնիշի մեքենա էր հափշտակել:

Հարուցվել էին քրեական գործեր, ոստիկանները պարզել էին, որ նշված խարդախություններն ու խարդախության փորձեր կատարող ոմն Գրիգորը Գյումրիի բնակիչ Գրիգոր Մուրադյանն է:

Դատաքննությունից խուսափելու համար հոկտեմբերի 18-ին Գրիգոր Մուրադյանի նկատմամբ հայտարարվեց հետախուզում:

Հետախուզման մեջ գտնվելով՝ նա հունվարի 23-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքում, դարձյալ քաղաքացու վստահությունը չարաշահելով, «Տոյոտա» մակնիշի մեքենա էր հափշտակել:

Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները եւ համատեղ միջոցառումների արդյունքում Գրիգոր Մուրադյանը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Դանակահարություն «Մոսկվա» կինոթատրոնի մոտ

Հունվարի 28-ին Հյուսիսային պողոտայից «շտապօգնության» մեքենան 18-ամյա մի տղայի տեղափոխեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Երիտասարդը կտրածծած վնասվածքներ ուներ: Նա բժիշկներին հայտնեց, որ վնասվածքը ստացել է ընկնելու հետեւանքով: Բժիշկները հեռացրին նրա փայծաղը: Առողջությանը պատճառվել էր ծանր վնաս:

Հիվանդանոց մեկնած օպերատիվ խումբը ձեռնարկեց համապատասխան միջոցառումներ՝ պարզելով դեպքի մի շարք հանգամանքներ: Պարզվեց՝ հիվանդանոց տեղափոխված երիտասարդը ստել էր. վնասվածքն ընկնելու հետեւանք չէր:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները պարզեցին, որ «Մոսկվա» կինոթատրոնի հետնամասում տեղի ունեցած վեճի ընթացքում երիտասարդը դանակահարվել էր: Նուտով հայտնի դարձավ նաեւ կասկածվողի ինքնությունը: Երեւանի բնակիչ, 21-ամյա Բորիս Ղազարյանը բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին, ապա ներկայացվեց նախաքննական մարմին, որտեղ էլ տվեց ինքնախոստովանական ցուցմունք:

Բորիս Ղազարյանը կալանավորվել է:

Կատավում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Սպանության փորձը բացահայտվեց

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Արարատի մարզի բաժնի ծառայողները հունվարի 22-ին Սուրենավան գյուղում հնչած կրակոցների հետքերով անասնագոմերից մեկի տարածք մեկնեցին: Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդել էին, որ անասնագոմի տարածքում հնչած կրակոցների հետեւանքով վիրավորներ կան:

Արարատի ոստիկանները պարզեցին, որ դեպքի վայր ժամանած «շտապօգնությունը» հիվանդանոց է տեղափոխել Սուրենավան գյուղի երեք բնակչի: Նրանց մոտ ախտորոշվել էին հրազենային վնասվածքներ: Դեպքի վայրում հայտնաբերված մեքենաներից մեկը եւս վնասված էր կրակոցների հետեւանքով:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ոստիկանները պարզեցին, որ մեքենաներից մեկը՝ «Ժիգուլին», տուժող կողմինն է: Ծուտով հայտնի դարձավ, որ «Նիվա»-ն էլ մյուս կողմինն է: Միջադեպից հետո մեքենան թողել էին դեպքի վայրում ու հեռացել: Ոստիկանների տվյալներով՝ «Նիվա»-ն պատկանում է սուրենավանցի Արգիշտի Բրոյանին:

Մինչ քննիչներն ու փորձաքրեագետներն ուսումնասիրում էին դեպքի վայրը՝ հայտնաբերելով արնանման հետքեր եւ «Կալաշնիկով» ինքնաձիգի կրակված պարկուճներ, քրեական հետախույզները պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ:

Նախնական տվյալներով՝ Արգիշտի Բրոյանի ոչխարները մտել էին հետագայում հիվանդանոց տեղափոխված անձանց հողատարածք եւ վնաս հասցրել: Իբրեւ վնասի հատուցում՝ տուժողները Բրոյանի ոչխարներից մի քանիսը վերցրել էի, Բրոյանն էլ, իմանալով այդ մասին, ազգականների հետ «Նիվա»-ով եկել էր ոչխարները հետ վերցնելու: Սկսված վեճի ընթացքում էլ մեքենայից վերցրել էր ինքնաձիգն ու կրակահերթ արձակել համագյուղացիների ուղղությամբ:

Քրեական գործ է հարուցվել:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Նա ծառայել է Հայրենիքին

Քսանութ տարի առաջ, երբ Հայաստանի սահմաններն ու Արցախը վտանգի մեջ էին, ստեղծվեց միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը, որը սահմանամերձ շրջանների պաշտպանությանը մասնակցեց ամենավտանգավոր, ռազմավարական նշանակության ամենաթեժ կետերում:

Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի շրջանավարտ, գնդակային հրաձգության միջազգային կարգի վարպետ Գագիկ Մելոյանը ջոկատի առաջին անդամագրվողներից էր:

Հատված «Անձնական գործ»-ից. «Դաճախ վտանգի ենթարկելով կյանքը՝ Գագիկ Մելոյանը ամեն ինչ արեց անօրինական զինված ջոկատները զինաթափելու եւ վնասազերծելու համար: Նա, որպես դիպուկահարների խմբի հրամանատար, ակտիվ մասնակցություն է ունեցել Սոթքի ոսկու հանքերի, Ալագյոլեր լճի շրջակայքի ազատագրման մարտական գործողություններին, իր խմբով վնասազերծել է թշնամու գնդացրորդներին եւ ականանետներին, ինչի շնորհիվ մարտիկներին հաջողվել է կարճ ժամանակում ազատագրել Սոթքի ոսկու հանքերի շրջակայքը:

...Ալագյոլեր լճի շրջակայքում ջոկատի մարտիկներն ընկնում են շրջափակման մեջ: Գագիկ Մելոյանի հմուտ գործողությունների շնորհիվ խմբին հաջողվում է դուրս գալ շրջափակումից:

...Ակտիվորեն մասնակցել է Արծվաշեն գյուղի պաշտպանական մարտերին, Շամշադինի, Պառավաքարի եւ տարածքի այլ գյուղերի պաշտպանական մարտերին:

Այգեպար գյուղի մոտ թշնամին ականներով եւ հրանոթներով դիպուկ հարվածներ էր հասցնում՝ մեծ վնասներ ու մարդկային զոհեր պատճառելով գյուղին: Գագիկ Մելոյանը գնահատելով իրավիճակը՝ հասկանում է, որ թշնամու դիպուկ կրակելու երաշխավոր ուղղությունը ցույց է տալիս կրակոցի ճշտորդը: Մի քանի րոպե փնտրելուց հետո նա ոչնչացնում է թշնամու կրակոցի ճշտորդին, ինչը անմիջապես բերում է կույր կրակոց, եւ հակառակորդը դադարեցնում է ռմբակոծումը:

...Մասնակցել է Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղի ազատագրմանը, երասխի պաշտպանական մարտերին...»:

Այսքանով, թերեւս, եզրափակենք «Անձնական գործ»-ից մեջբերումը:

Գագիկ Մելոյանը համեստ մարդ էր, չէր սիրում խոսել իր մասին, փոխարենը՝ ոգեւորությամբ պատմում էր հրամանատարի՝ Գեորգի Գրիգորյանի ու մարտական ընկերների մասին. «Մարտական գործողություններից հետո երբ ծանր հոգեվիճակում էինք հայտնվում, դե, մենք եղել ենք խաղաղ մարդիկ, իսկ հիմա պետք էր մարդ սպանել, Գրիգորյանը հոգեբանական աշխատանք էր տանում մեզ հետ, նրա շնորհիվ հաղթահարեցինք այդ բարդույթը»:

Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի առաջին զոհը Գարեգին Բաղդասարյանն էր: Վարդենիսի ուղղությամբ էին կռվում. Գեորգի Գրիգորյանը երդման պես ասում է՝ Գարիկի փոխարեն թշնամին տասը զոհ է տալու: Գործողությունների պլան է մշակվում, եւ գիշերը Արմեն Պապյանը, Գագիկ Մելոյանն ու էլի մի քանի տղաներ գնում են իրականացնելու: Իրականացնում են պատվով...

...Շուռնուխ գյուղը թշնամու ուղիղ նշանառության տակ էր: Գյուղի շրջակայքը ազատագրելու համար որոշվում է հետախույզների ջոկատ ուղարկել թշնամու գրաված տարածք: Խմբի հրամանատար է նշանակվում Արմեն Պապյանը: Խումբը կատարում է առաջադրանքը, սակայն վերադարձին ընկնում է շրջափակման մեջ ու մարտի բռնվում: Պահն օրհասական էր: Եվ այստեղ օգնության է հասնում Գագիկ Մելոյանը: Դիրքավորվելով՝ դիպուկահար կրակ է բացում՝ ստիպելով հակառակորդին նահանջել՝ այդկերպ ապահովելով ջոկատի մարտիկների՝ շրջափակման օղակից դուրս գալը:

Զինադադարից հետո Գագիկ Մելոյանը մինչեւ 2008 թվականը շարունակում է ծառայությունը ոստիկանությունում՝ հավատարիմ մնալով սպայի կոչմանն ու մարդկային բարձր որակներին:

Դավիթ ՊՈՂՈՍՅԱՆ

Դ.Գ.- *Ցավով հայտնում ենք, որ փետրվարի 6-ին վախճանվեց ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Գագիկ Մելոյանը: Հայրենասեր, պատրաստակամ, բարեխիղճ, օրինակելի մարդ. Գագիկ Մելոյանն այդպիսին կմնա ճանաչողների հիշողության մեջ:*

Հայտնաբերվեց սահմանին

Հունվարի 20-ին Բագրատաշենի սահմանային անցակետից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման ենթարկվեց Արմավիրի մարզի բնակիչ Գուրգեն Բաղրամյանը, որը 2015 թվականից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերի մեղադրանքով:

Իսկ հիմա այն մասին, թե ինչ «քաջագործություններ» էր արել երեք տարի հետախուզման մեջ գտնվող սույն երիտասարդը:

Գուրգեն Բաղրամյանը «մասնագիտությունը» անչափահաս տարիքից էր ընտրել: Մինչ չափահաս դառնալն «ընդգրկվեց» պրոֆիլակտիկ հաշվառման մեջ: Չափահաս դառնալուց ամիսներ անց բարեկամի տնից խմիչք ու քաղցրավենիք գողացավ: Իմացան, ներեցին: Բայց «անմեղ» գողությանը հետեւեցին արդեն «մեծ» գործերը: Տարեկից տղաները բանակ զորակոչվեցին, ինքը՝ կալանավայր. մի քանի համաքաղաքացիների դուռ-պատուհան էր բացել ու փող, ոսկյա զարդեր, համակարգիչ գողացել: Մեկուկես տարի կալանավայրում անցկացրեց, պայմանական-վաղաժամկետ ազատվեց ու մի երկու տարի գողությունից ձեռք քաշեց:

2015 թվականը, սակայն, սկսվեց գողանալով:

Հունվարի 5-ին հարեւանի տնից երկու հարյուր դոլար ու մեկուկես միլիոն դրամի ոսկյա զարդեր գողացավ: Մինչ Արմավիրի ոստիկանները օպերատիվ-հետախուզական միջոցառումներ էին ձեռնարկում, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն գողության մասին նոր ահազանգ հնչեց. մոտ երեք միլիոն դրամի ապրանք՝ համակարգիչ, տեսախցիկ, ոսկյա ու արծաթյա զարդեր էին գողացել Բերքաշատ գյուղի մի տնից: «Բերքաշատ» էր եղել նաեւ օրեր անց նույն գյուղի մեկ այլ բնակչի տնից կատարված գողությունը: Դուռը հարմարեցված բանալիով բացել ու գողացել էին համակարգիչ, ոսկյա զարդեր, հազար դոլար:

Քրեական հետախույզները կասկածներ ունեին, որ գողությունների հեղինակը նույն մարդն է, բայց մինչ կասկածյալի ինքնությունը պարզվեց, նա արդեն լքել էր հանրապետության տարածքը:

Հանցագործությունը կատարող անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով հարուցված քրեական գործը կասեցվեց: Գուրգեն Բաղրամյանին հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումները շարունակվում էին, որոնց արդյունքում օպերատիվ տեղեկություն ստացվեց, որ նա գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում եւ պատրաստվում է վերադառնալ Հայաստան:

Վերադարձավ հունվարի 20-ին, իսկ Բագրատաշենի սահմանային անցակետում նրան «դիմավորեցին» ոստիկանության աշխատակիցները:

Գողությունների փաստով հարուցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հ. Պ.

Փորձաքրեագիտական վարչության առօրյան

Հանցագործությունների բացահայտման գործում գիտական մեթոդների օգտագործումը ժամանակի հրամայականն էր: 1910-ականների վերջերին հիմնվեցին դատական փորձաքննությունների առաջին կաբինետները: 1926 թ. հունվարի 26-ին Ներքին գործերի ժողկոմատը որոշում կայացրեց քրեական հետախուզությանը կից գիտատեխնիկական ստորաբաժանում ստեղծելու մասին:

Փորձաքրեագիտական ոլորտի գիտական նվաճումներին համահունչ քայլող, բարդ ու պատասխանատու փորձաքննություններ իրականացնելու ունակ, ժամանակակից տեխնիկական հնարավորություններով ու արհեստավարժ աշխատակիցներով հագեցած՝ ահա ոստիկանության փորձաքրեագիտական վարչության բնութագիրը: Այստեղ է պահվում մեր երկրում միակ էլեկտրոնային քարտադարանը, որտեղ թվայնացված տարբերակով պահվում են դատապարտված անձանց մատնահետքերը: Փորձաքրեագիտական վարչությունում են կատարվում դեպքի վայրերում հայտնաբերված մատնահետքերի համեմատական հետազոտությունները:

Փորձաքրեագիտական վարչությունում է գտնվում նաեւ մեր երկրի միակ գնդակապարկուճադարանը: Այստեղ են պահվում ակոսափող զենքերի ստուգողական կրակոցների գնդակներն ու պարկուճները: Գնդակապարկուճադարանի ծառայողները հեշտությամբ պարզում են, ասենք, հրազենով կատարված սպանության դեպքի վայրում ի՞նչ հրազեն է գործադրվել, կրակոցները նո՞ւյն զենքով են արձակվել եւ այլն: Պարկուճներին առկա հետքերը արխիվացվում են. անհրաժեշտության դեպքում կատարվում են համեմատական հետազոտություններ:

ԴՆԹ հաշվառումներ. այս առումով եւս ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունը միակն է մեր երկրում: Այստեղ են արխիվացվում դեպքի վայրերում հայտնաբերված կենսաբանական ծագման տեսանելի եւ անտեսանելի հետքերի ուսումնասիրմամբ ստացված գենետիկական տվյալները:

Վարչության հատուկ հետազոտությունների բաժինը մեր երկրում ոլորտի առաջատար հաստատություններից է՝ ժամանակակից տեխնիկական հնարավորությամբ լաբորատորիայով: Այստեղ են որոշվում՝ փորձաքննության ներկայացված նյութերն ու զանգվածները թմրամիջո՞ց են, թե՝ ոչ: Բաժնի մասնագետները կարող են անգամ վերջին սերնդի բնական ու արհեստական թմրամիջոցներ կատարել՝ անատոմիամորֆոլոգիական հատկանիշների պարզաբանմամբ: Լաբորատորիայում ուսումնասիրվում են նաեւ պայթյունի հետքեր, վառելիքաքսուքային նյութեր եւ այլն: Այնտեղ են կատարվում նաեւ մանրաթելային ամենաբարդ փորձաքննությունները, որոնց արդյունքում հնարավոր է պարզել փոխադարձ փոխազդեցության հանգամանքը: Ասենք՝ ինչ-որ մեկը լքել է ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը, եւ օպերատիվ աշխատանքի արդյունքում իրավապահների տեսադաշտում հայտնվել է կասկածվողը, ապա նրա հագուստի գործվածքի մանրաթելերի եւ վարորդի նստելատեղից վերցված մանրաթելերի համեմատական հետազոտությամբ հնարավոր է լինում պարզել՝ նա՞ է վարել մեքենան, թե՝ ոչ:

Փորձաքրեագիտական վարչությունում է կատարվում դեպքի վայրերից հայտնաբերված իրեղեն ապացույցների նեղ մասնագիտական զննությունը, ինչի արդյունքում հնարավոր է լինում պարզել՝ հրազենի, սուր-կտրող-ծակող առարկայի, թե այլ իրի հետեւանքով է պատռվել հագուստը:

Դատաձեռագրաբանական եւ փաստաթղթերի դատատեխնիկական հետազոտությունների բաժանմունքը վարչության կարեւոր ստորաբաժանումներից է: Կեղծ փողեր, ստորագրություններ, կնիքներ, փաստաթղթեր, կտակներ. ահա թե ինչի հետ գործ ունեն այս բաժանմունքի մասնագետները:

Մեթոդական ապահովման եւ հետքաբանական հետազոտությունների բաժնի պրոֆեսիոնալները զբաղվում են հանցագործության գործիք հանդիսացող տեխնիկական միջոցների թողած հետքերի ու վնասվածքների հետազոտությամբ, պարզում են՝ փականը բնօրինակ բանալիո՞վ է բացվել, թե՞ հարմարեցված գործիքով, կատարում են ճանապարհատրանսպորտային պատահարների հետքաբանական հետազոտություններ եւ այլն: Ստորաբաժանումը տարեցտարի հագեցվում է տեխնիկական հնարավորություններով: Օրինակ, քայլքի հետքի սկանավորման եւ հետազոտման համալիրը վերջին ձեռքբերումներից է, որի միջոցով հնարավոր է պարզել ենթադրյալ հանցագործի հասակը, տարիքը, ֆիզիկական հնարավոր արատները, քայլերի տեմպը:

Այսպիսին է դեպքի վայրերում անձայն աշխատող, հանցավորության դեմ պայքարի առաջնագծում կանգնած փորձաքրեագետների աշխատանքը:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հիվանդանոցի «այցելուն»

Վանաձորցի Գարիկ Աբրահամյանի տատը բժշկական կենտրոնից դուրս գրվելուց հետո էր միայն նկատել, որ արհեստական ատամնաշարը կորցրել է: Եվ ահա, Գարիկը մտածելով, որ տատն ատամնաշարը թողել է հիվանդանոցում, որոշեց գնալ փնտրելու:

Կեսգիշերն անց մտավ հիվանդանոց եւ կիսաբաց դռնով մի հիվանդասենյակ նկատեց: Անտարբեր չանցավ. մահճակալի մոտ՝ հատակին դրված հիվանդապահի պայուսակը չվրիպեց աչքից: Շուրջբոլորը նայելով՝ մտավ: Բոլորը քնած էին: Գարիկը պայուսակը վերցրեց ու արագ հեռացավ: Հետնամուտքից դուրս գալիս դրամապանակը վերցրեց, իսկ պայուսակը դեն նետեց: Ավարը 34 հազար դրամ էր:

Տուժողը պայուսակի բացակայությունը նկատեց առավոտյան: Պարզ էր, որ ինչ-որ մեկը գողացել էր: Իսկ թե ով էր գիշերային այցելուն, ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզեցին ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցները:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Գարիկ Աբրահամյանը խոստովանական բացատրություն տվեց:

Նրա արարքում առկա էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով նախատեսվածց հանցարարք: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

«Պարզաբանում»

Արթիկցի Լարիսա Մարտիրոսյանը ոգելիցի նկատմամբ անտարբեր չէր: Կարելի է ասել՝ անառիթ խմողներից էր: Մի օր էլ, դարձյալ հարբած, շենքի բակում հանդիպեց հարեւան Սամվելին ու ծխախոտ խնդրեց: Սամվելը մի քանի գլանակ հյուրասիրեց: Իսկ Լարիսան, շնորհակալություն հայտնելու փոխարեն, հայհոյեց: Սամվելը նման պահվածքից զարմացած՝ փորձեց պարզել պատճառը: Սակայն հարեւանուհին այն աստիճանի էր հարբած, որ նորից հայհոյեց: Սամվելն էլ բռունցքներով խփեց նրա դեմքին: Լարիսան, հարբած ու ծեծված, տուն շտապեց: Եվ քանի որ Սամվելի զայրույթը չէր մեղմվում, որոշեց գնալ նրա հետեւից ու հայհոյանքների համար բացատրություն պահանջել: Լարիսան նրան տուն հրավիրեց եւ «պարզաբանեց»՝ «Լավ եմ արել»:

Սամվելը հասկանալով, որ նրա հետ խոսելն անիմաստ է, հեռացավ:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Սամվել Սահակյանը խախտել էր քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները, սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Անհաշտության հեղեւանքը

Դիլիջանցի Անդրանիկ Հարությունյանը երկու տարի առաջ սիրահարվեց Մարինեին: Թեպետ ծնողները դեմ էին, բայց ամուսնացան:

Որոշ ժամանակ անց, սակայն, Անդրանիկի նախկին ջերմությունն ասես անհետացավ: Ամենօրյա վեճերից Մարինեն հոգնել էր: Վեճերի ընթացքում Անդրանիկը երբեմն նաեւ ծեծում էր կնոջը: Մարինեն կարծում էր, որ ժամանակի ընթացքում ամեն ինչ կշտկվի ու առաջվանը կդառնա, բայց... Մեկուկես տարի տեւած ամուսնական կյանքը կարծես հասել էր տրամաբանական ավարտին:

Հերթական կենցաղային վեճի ընթացքում Անդրանիկը խոհանոցային դանակով խփեց կնոջը:

Կատարվածով ոստիկանության Դիլիջանի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ Մարինեին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Անդրանիկ Հարությունյանի արարքը որակվեց քրեական օրենսգրքի 117 հոդվածի հատկանիշներով:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որտեղի՞ց են գալիս մեր երազները

Սովորաբար մարդն արթնանալուց հետո դժվարությամբ է հիշում երազները, պատահում է, որ հիշողության մեջ պահպանվում են ինչ-որ պատառիկներ կամ որոշ հատվածներ, որոնք թույլ են տալիս վերհիշել երազը՝ մասամբ կամ ամբողջությամբ:

Հաճախ երազում հայտնված պատկերներն ու դեպքերը անիրական կամ աբսուրդային են թվում, օրինակ՝ երկինք խոյացող աստիճաններ, թռչող մարդիկ, կենդանիներ...

Պարզվում է, որ մարդը ինչքան շատ է քնում, այնքան տարօրինակ են դառնում նրա երազները: Նոր քնած մարդու երազներում կատարվող դեպքերն ու իրադարձությունները իրական հիմք ունեն, արարքներն ու մարդիկ իրական դեմքեր են: Բայց ժամեր անց երազներն արդեն դառնում են պարադոքսալ եւ անիրական:

Բրիտանական համալսարանի պրոֆեսոր Խոսե Մալինովսկու խոսքով՝ երազների տարօրինակություններն ու դրանց զգայականությունը մեծանում են քնելու ժամանակահատվածին զուգահեռ:

Գիտնականները մի քանի կամավորների ընտրեցին հետազոտությունների համար: Նրանց հետեւեցին երկու գիշեր: Յուրաքանչյուր հետազոտվողի չորս անգամ արթնացնում էին, գրի առնում տեսած երազները, իսկ առավոտյան պահանջում էին պատմել: Նրանցից քչերն էին կարողանում վերապատմել այն, ինչ տեսել էին: Իսկ գիշերային գրառումներն ավելի բովանդակալից եւ հետաքրքիր էին:

Մասնագետներն այնքան էլ վստահ չեն, որ երազում կատարվող իրադարձություններն ու դեպքերը կապված են իրար հետ կամ էլ պարզապես երեւույթներ են, որոնք իրականում երբեք չեն կատարվում: Բայց մասնագետները հակված են այն մտքին, որ երազները մարդու համար կարծես անվտանգության գոտի են, որտեղ նա կարող է լուծել իր անձնական հարցերը: Ըստ Մալինովսկու՝ երազները միջոց են, որոնք ենթագիտակցության օգնությամբ կարողանում են մուտք գործել անգիտակից զգացումների եւ հույզերի մեջ: Հետաքրքիրն այն է, որ երազի ընթացքում մարդն ի վիճակի է գտնել ամենադժվար պրոբլեմի լուծումը, ինչը երկար ժամանակ իրեն տանջում էր: Ըստ մասնագետների՝ դա հարյուր տոկոսով ապացուցված է:

Զուր չէ, որ շատ հոգեբաններ եւ հոգեթերապեւտներ իրենց հիվանդներին բուժում են քնի միջոցով: Այդ մեթոդը շատ հիվանդների կյանք է փրկել:

Այնպես որ, քնեք ճիշտ ժամանակին եւ առողջ եղեք: Առողջության գլխավոր գրավականներից մեկը քունն է:

Հ. Գ.- *Երազների նշանակությունը տարբեր ժամանակներում եւ մշակույթներում տարբեր է: Երազների մեկնության պատմությունը հասնում է մինչեւ մ.թ.ա. 5000-4000 թվականները: Երազների առաջին մեկնությունը 5000 տարի առաջ Միջագետքում գտնված մի կավե հուշատախտակի վրա է: Հունական եւ հռոմեական ժամանակաշրջանում մարդիկ հավատում էին, որ երազներն աստվածներից կամ մահացածներից եկած հաղորդագրություններ են, որոնք գուշակում են ապագան:*

Զիգմունդ Ֆրեյդը ուսումնասիրել է երազների տեսությունն ու մեկնությունը: Նա երազները մեկնաբանում է որպես ամենախոր ցանկությունների արտահայտում, ինչը հաճախ վերաբերում է մանկության հիշողություններին: Իր «Երազների մեկնությունը» գրքում Ֆրեյդը զարգացնում է երազների մեկնաբանման հոգեբանական տեխնիկան եւ նախագծում ուղենիշներ՝ հասկանալու այն նշաններն ու հիմնական մտքերը, որոնք արտահայտված են երազներում:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Խառը ծեծ

Ոստիկանություն զանգած 33-ամյա տղամարդը հայտնում էր, թե կինը եւ կնոջ եղբայրը ոչ ադեքվատ վիճակում եկել են իր տուն եւ վիճում են:

Պարզվել է՝ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ ահազանգողը, հոր եւ մոր գործուն աջակցությամբ, ծեծել է կնոջը, կինն էլ, եղբոր գործուն աջակցությամբ, ծեծել է ամուսնուն:

Պոզահարողը

Քթոսկրի կոտրվածքով բուժօգնության էր դիմել 25-ամյա մի տղամարդ եւ հայտնել որ վնասվածքը ստացել է իրենց գոմում. կերակրելու ժամանակ կովն է պոզահարել:

Թեեւ տղամարդը նույնը հայտնել է նաեւ ոստիկաններին, սակայն իրավապահները կասկածներ ունեն, որ պոզահարողը կով չի:

Դստեր միջոցով

45-ամյա մի տղամարդ բանավոր հաղորդում է տվել, որ դեկտեմբեր-հունվար ամիսներին, իր 19-ամյա դստեր միջոցով, ավտոտնակի չհրկիզվող պահարանից գողացել են 11 հազար դոլար եւ 12 միլիոն դրամ:

Իր ասելով՝ նախկինում ոստիկանություն չի դիմել քանի, որ չի ցանկացել վարկաբեկել դստերը:

Հյուր գնալու վնասները

Գիշերվա չորսին 63-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ իր ծանոթ Դավիթի բնակարանում տանտերն ու նրա ընկերը ծեծել են իրեն ու գրպանից գողացել 49 հազար դրամ եւ ձեռքի ժամացույց:

Տանտերն ու ընկերը բերման են ենթարկվել բաժին եւ ստորագրությամբ բաց թողնվել:

Մաքրեց՝ թողեց

Ոստիկանություն է զանգել մի երիտասարդ եւ հայտնել, թե իր ծանոթ, 87-ամյա դասախոս կինը մաքրուհու գնալուց հետո նկատել է, որ գողացվել է մի քանի հազար դոլար:

Դասախոսուհին հաղորդում է տվել, որ իր բնակարան այցելած մաքրուհի Նունեի հեռանալուց հետո ննջասենյակի պահարանից գումարն անհետացել է: Երեւի Նունեն ուղղակի է հասկացել, թե «փողը ձեռի կեղտ է»...

Ձեռնարկվում են միջոցառումներ Նունեին հայտնաբերելու ուղղությամբ:

www.police.am

Հունվարի 31-ից փետրվարի 7-ն ընկած ժամանակահատվածում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 43 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 2-ը հետախուզվում էր սպանության, սպանության փորձի եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու,1-ը՝ սպանության փորձի, ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու եւ խուլիգանության, 1- ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 2-ը՝ ծեծի, 1-ը՝ մարդուն առեւանգելու եւ ավազակության, 1-ը՝ մարդուն առեւանգելու եւ խուլիգանության, 2-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձի, 8-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելուն կամ վնասելուն հանցակցելու, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու եւ կաշառք ստանալու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ կանխամտածված սնանկության, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու եւ խուլիգանության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ անօրինական միգրացիայի կազմակերպման, 1-ը՝ ազատազրկման վայրից, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստի համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 3 հետախուզվող:

Արձանագրվել է 79 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 97-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 19 դեպք. 20 մարդ ստացել է մարմնական վնասվածքներ:

Հանրապետության ճանապարհներին

Փետրվարի 3-ին Երեւանի Լենինգրադյան փողոցում իրար են բախվել «Ֆոլքսվագեն» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 29-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 3-ին «Հյունդա» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Աճառյան փողոցի եւ 2-րդ փակուղու խաչմերուկում բախվել է եզրաքարերին եւ շրջվել. «Հյունդա»-ի 26-ամյա ուղեւորը մահացել է, իսկ վարորդը եւ 25-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 4-ին «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Բաղրամյան, Մաշտոցի եւ Սայաթ-Նովայի պողոտաների խաչմերուկում վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 4-ին Երեւանի Տիչինայի փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ներից մեկի 14-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 4-ին Երեւանի Հովնաթանի եւ Մեծարենցի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ԳԱԶ-33021» եւ «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենաներ. «ԳԱԶ-3110»-ի 57-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 4-ին «Միցուբիշի Գրանդիս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Սեւան քաղաքի Նաիրյան փողոցում վրաերթի է ենթարկել 38-ամյա քաղաքացուհու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Փետրվարի 5-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Ագաթանգեղոսի փողոցում վրաերթի է ենթարկել 68-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 5-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Դավիթաշենի կամրջի վրա բախվել է մայթեզրի երկաթե խողովակներին. 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 5-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Արին-Բերդի փողոցում վրաերթի է ենթարկել 20-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 5-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Սարկավագի փողոցում վրաերթի է ենթարկել 72-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 5-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղում վրաերթի է ենթարկել 10-ամյա տղայի եւ դիմել փախուստի: 72-ամյա վարորդը հայտնաբերվել եւ ներկայացվել է ոստիկանություն:

■

Փետրվարի 5-ին Մասիս-Մարմարաշեն ճանապարհի գազալցակայանի դիմաց իրար են բախվել «Մերսեդես 8-180» եւ «Նիսան Իքս Թրայլ» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 5-ին Ստեփանավան քաղաքի Բաղրամյան-Մեղապարտի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «Նիսան»-ի վարորդը վրաերթի է ենթարկել 35-ամյա քաղաքացու:

■

Փետրվարի 5-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Հրազդան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոցում վրաերթի է ենթարկել 64-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Մահափորձ եւ ներում

Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Երկրորդը արտակարգ բարի մարդ էր, իսկական քրիստոնյայի տիպար: Նա ուներ նաեւ մեկ այլ անզուգական արժանիք, ինչը հատուկ է հոգով անաղարտ անձնավորություններին՝ սիրում էր շփվել մարդկանց հետ, շատ էր ճամփորդում (եղել է նաեւ Հայաստանում, օրհնություն հղել Ծիծեռնակաբերդի անմար կրակի առաջ), ի տարբերություն շատ եկեղեցականների՝ աչքի էր ընկնում զարմանալի լայնախոհությամբ: Նա խաղաղություն էր տարածում իր իսկ ներկայությամբ, ձգտում հաշտեցնել կրոնական տարբեր ուղղությունների, մարդկանց ներարկել սեր, հավատ, բարություն: Նա իր վրա վերցրեց եկեղեցու գործած սխալները եւ թողություն խնդրեց Աստծո եւ մարդկության առաջ: Սակայն, ինչպես պարզվեց, աշխարհում կան արարածներ, որոնք ոչինչ հաշվի չեն առնում եւ մարդասպանի իրենց բնազդին հնազանդ՝ թիրախ են փնտրում...

Հավատացյալների հետ առանց թիկնազորի հաղորդակցվելու սովորույթը Հովհաննես-Պողոսին դարձրել էր հարմար թիրախ մարդասպանի համար, սակայն Աստծո կամքը եւ նախախնամության շնորհիվ նա ողջ մնաց, ապաքինվեց ու ներեց այն մարդուն, որը ցանկանում էր սպանել իրեն:

1981 թվականի մայիսի 13-ին Հովհաննես-Պողոս Երկրորդը իր բաց մեքենայով դանդաղ անցնում էր Հռոմի սուրբ Պետրոսի հրապարակում հավաքված ստվար բազմության միջով: Անցնում էր եւ իր օրհնանքը սփռում մարդկանց վրա:



Հանկարծ հնչեց վեց կրակոց, եւ սուրբ հայրը արնաշաղախ ընկավ իր քարտուղարի ձեռքերին:

Ականատեսներից մեկը հետագայում այսպես է նկարագրում մահափորձի տեսարանը. «Ես տեսա արյան երկու շիթ: Նրանք վառ-կարմիր ընդգծվեցին սուրբ հոր ճերմակաթույր զգեստի վրա»:

Մեկ ուրիշը պատմում է. «Ընկնելուց հետո նրա դեմքը աղճատվեց ցավից: Սակայն սոսկ վայրկյան տեւեց: Քիչ անց դեմքը դարձյալ խաղաղ էր՝ ինչպես միշտ»:

Մինչ Պապին տեղափոխում էին հիվանդանոց, ոստիկանությունը շրջապատեց կրակողին: Ատրճանակը դեռ ձեռքին էր: Նրան ձերբակալեցին...

Վիրավոր Պապի վիրահատությունը տեւեց չորս ժամ: Չնայած գնդակներն արձակվել էին դիմահար, սակայն կենսական կարեւոր ոչ մի օրգան չէր վնասվել: Կաթոլիկ եկեղեցու հովվապետի կյանքին վտանգ չէր սպառնում:

Պարզվեց, որ մահափորձի հեղինակը թուրք է՝ Մեհմեդ Ալի Աղջան: Նա թուրքական ահաբեկչական ընդհատակյա «Գորշ գայլ» կազմակերպության անդամ էր: Մինչ Հռոմի պապի վրա մահափորձ կատարելը, 23-ամյա Աղջան Ստամբուլում սպանել էր «Միլիեթ» թերթի խմբագրին, դատապարտվել, փախել բանտից, եկել Հռոմ՝ Պապին սպանելու նպատակով:

Հովվապետը արագ ու լիովին ապաքինվեց:

1982 թվականի հուլիսին Հռոմում տեղի ունեցավ Աղջայի դատավարությունը:

Հանցագործը մեղավոր ճանաչվեց եւ դատապարտվեց ցմահ ազատազրկման:

Երկու տարի անց Հովհաննես-Պողոսը բանտում այցելեց նրան: Աղջան ծնկի իջավ նրա առաջ, համբուրեց ձեռքն ու ներում հայցեց:

Պապը ներեց նրան...

Սկիզբը՝ նախորդ համարում

Դահիճը

Սպանություններն իրենց հետքն էին թողել Վասիլի Բլոխինի վրա: Նրա տնային տնտեսուհին վկայում էր, որ Բլոխինը չար եւ դաժան մարդ էր: Հաճախ էր տուն վերադառնում առավոտյան՝ հարբած: Միակ կիրքը, որքան էլ զարմանալի է, ձիերն էին: Դահճի տնային գրադարանում շուրջ 700 գիրք կար կենդանիների մասին:

Վասիլի Բլոխինի «ասպետային ժամը» 1940 թվականին էր, երբ իր խմբով մասնակցեց Օսպաշովյան ճամբարի լեհ ռազմագերիների, աստիճանավորների ու ոստիկանների Կատինում իրականացված զանգվածային գնդակահարություններին: 1991 թ. հարցաքննված Կալինինի մարզի ՆԳԺԿ վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Դմիտրի Տոկարեւը հայտնել է, որ անձամբ ականատես է եղել Բլոխինի «աշխատանքին»:

Տոկարեւը վկայում էր. «Բլոխինն ազդանշան տվեց՝ «Դե ինչ, եկեք սկսենք»: Պատրաստեց իր հատուկ զգեստը՝ կաշվե դարչնագույն գլխարկ, երկար կաշվե թիկնոց, դարչնագույն կաշվե ձեռնոցներ՝ մինչեւ արմունկը: Ինձ վրա դա մեծ ազդեցություն թողեց. ես տեսա դահճին»:

«Բլոխինը եւ Ռուբանովը մարդկանց տանում էին միջանցքով դեպի Կարմիր սենյակ (կամ լենինյան սենյակը՝ 5x5-ի վրա), որտեղ քարոզչական պլակատներ ու Լենինի գիպսե արձանն էին: Այնտեղ վերջին անգամ ստուգում էին բանտարկյալի անձը, հարցնում նրա անունը եւ ծննդյան թվականը, հետո համապատասխան նշում էին անում ցուցակում, որպեսզի որեւէ սխալմունք չլիներ: Վերջապես լեհ սպային կամ ոստիկանին ձեռնաշղթաներ էին հագցնում ու ծոծրակին կրակելով՝ վերջ տալիս կյանքին: Փորձառու դահիճները կրակում էին փողը բարձրացրած, թեք, որպեսզի գնդակը անցնի աչքի կամ բերանի միջով, որ արյունը քիչ լինի, քանի որ ծոծրակին կրակելով՝ արյունը հորդառատ է լինում: Օրական մահապատժի էին ենթարկում առնվազն 250 մարդու:

Սպանվածների դիակները դուրս էին բերվում եւ պահեստային դռներով նետում բեռնատարի մեջ: Ավտոմեքենաների թափքերն ամեն օր լվանում էին ուղեղների եւ արյան մնացորդներից: Դիակները (յուրաքանչյուր մեքենայում՝ 25-ից 30) փակում էին բրեզենտով, որն օպերացիայի վերջում, Բլոխինի հրամանով, ոչնչացվում էր: Այդ կերպ՝ գնդակահարվում էր վեց հազրից ավելի մարդ: Մարմինները տեղափոխում էին անտառ եւ թաղում խրամների

մեջ, որոնք հողով ծածկում էր ՆԳ ժողկոմատի էքսկավատորավար Անտոնովը՝ օգնականի հետ:

Երբ Օսպաշկովոյի բանտարկյալներն ամբողջությամբ ոչնչացվել էին, Բլոխինը կազմակերպեց հրաժեշտի գինարբուք: Բլոխինը պարգեւատրվեց ամսական աշխատավարձով: Ոմանց, որպես պարգեւատրում, տրվեց անվանական «Նագան», հեծանիվ, պատեֆոն:

Ահա թե ինչ է պատմել Տոկարեւը. «Եթե ճիշտ եմ հասկացել, լեհ ռազմագերիներին գնդակահարել են «Վալտեր»-ից: Դա լավ գիտեմ, քանի որ բերեցին մի ամբողջ ճամպրուկ: Բլոխինը բաժանում էր ատրճանակները, իսկ երբ ավարտում էին աշխատանքը, ատրճանակները վերցնում էր Բլոխինը»:

Հայտնի է, որ առաջին գիշերը գնդակահարել էին շուրջ 300 մարդու, հետո՝ մինչեւ 250: Ընդհանուր առմամբ՝ Կատինում գնդակահարվել է 21 հազար 857 լեհ. դա մարդկության դեմ գործած սարսափելի հանցագործություններից է: Ինչ վերաբերում է «Վալտեր»-ներին, ապա նրանց կիրառումը տրամաբանական էր: «ՏՏ-30» ատրճանակների անընդհատ օգտագործումը կարող էր բերել խաթարումների, քանի որ նրանց փողերը շուտ էին տաքանում, իսկ «Վալտեր»-ները հուսալի էին: Բացի այդ, օտարերկրյա զենքի օգտագործումը հնարավորություն կտար հետագայում արդարանալու, որ գնդակահարությունը կատարել են գերմանացի հետախույզները, եւ չեկիստները դրա հետ որեւէ առնչություն չունեն:

Նշենք, որ երբ գերմանացիները Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գրավեցին այդ տարածքը եւ ի լուր աշխարհի ցուցադրեցին ստալինյան ոճրագործության արդյունքները, Խորհրդային Միության ղեկավարությունը մատնացույց արեց օտարերկրյա ատրճանակների օգտագործումը եւ այդ կերպ «հերքեց» իր մեղսակցությունը:

Տոկարեւը նաեւ հիշում է, որ Բլոխինն իր մարդկանց հետ աշխատում էր ամեն գիշեր, առանց ընդմիջման: Միջին հաշվով՝ մեկ մահապարտի մահապատժի համար անհրաժեշտ էր երեք րոպե: «Հերթափոխից» հետո յուրաքանչյուր գնդակահարող Բլոխինից ստանում էր օղի, քանի որ նույնիսկ փորձառու դահիճների նյարդերն արդեն սահմանագծին էին: Ամրությունը պահպանում էր միայն Բլոխինը, որով եւ «հարգանքի» էր արժանանում ոչ միայն ենթակաների, այլեւ բարձրագույն ղեկավարության կողմից եւ արժանանում էր կոչումների ու պարգեւների: Այսպես, 1935 թ. Բլոխինը Պետական անվտանգության կապիտան էր, 1943 թ.՝ գնդապետ, իսկ երկու տարի անց՝ գեներալ-մայոր: 1940 թ. նա ստացավ Ստալինյան մրցանակ, հետո նաեւ՝ «Պոբեդա» ավտոմեքենա:

Վերջին գնդակահարությունը Բլոխինն իրականացրեց 1953 թ. մարտի 2-ին՝ Ստալինի մահվանից մեկ օր առաջ: Նրան ծառայությունից ազատեցին 1953 թ. ապրիլի 2-ին: Առաջին անգամ, երկար տարիներ անց, Բլոխինը մնաց անգործ: Նրան փրկեց այն, որ ընդամենը «հրամաններ կատարող էր»: Բլոխինին միայն հրավիրում էին հարցաքննությունների: Պարզապես նա կատարել էր իրեն հանձնարարված աշխատանքը:

1954 թ. Վասիլի Բլոխինին զրկեցին Պետական անվտանգության կողմից սահմանված թոշակից, ապա զրկվեց նաեւ բոլոր կոչումներից ու պարգեւներից:

1955 թ. նա կնքեց մահկանացուն:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Սպանություն Ջրվեժում

Սպանությունը կատարվել է 2002 թ. հունիսի 30-ին, իսկ դատական ակտը կայացվել է վերջերս:

Սոկրատ Մ.-ին մեղադրանք էր առաջադրված շահադիտական դրդումներով սպանության համար` քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: Սպանված Ռուդիկը նրա աներձագն էր:

Ըստ մեղադրանքի` Սոկրատ Մ.-ն Ռուդիկի Ջրվեժի տան վաճառքից ստացված 3 հազար դոլարից 1000 դոլար մասնաբաժին ստանալու հարցով վիճել է Ռուդիկի հետ: Սոկրատ Մ.-ն, ըստ մեղադրանքի, հունիսի 30-ին գնացել է Ջրվեժ, նշանածի տնից դուրս է կանչել Ռուդիկին, վաճառված տնից իր մասնաբաժինը ստանալու, իր ընտանիքի քայքայման վտանգ առաջացնելու դրդապատճառներով վիճել է վերջինիս հետ, որի ընթացքում դանակով հարվածներ է հասցրել Ռուդիկի կրծքավանդակին: Միջամտել են հարեւանները: Սոկրատը դիմել է փախուստի: Ռուդիկը տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ մահացել է:

Սոկրատ Մ.-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, քրեական գործի վարույթը կասեցվել է: 2016 թ. դեկտեմբերին Սոկրատ Մ.-ն հայտնաբերվել է Ռուսաստանում եւ տեղափոխվել Հայաստան: Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում Սոկրատ Մ.-ն իրեն մեղավոր չի ճանաչել: Նա հայտնել է, թե կնոջ հետ մեկնել է Ռուսաստան, որտեղ բնակվել ու աշխատել է կնոջ ծնողների ու եղբոր` Ռուդիկի հետ: Ընդհանուր վաստակած գումարից տուն են գնել աներոջ ընտանիքի համար: Ռուդիկը հորը ստիպել է վաճառել այդ տունը, գումարը տալ իրեն: Մեկուկես տարի անց Սոկրատն ընտանիքի հետ վերադարձել է Հայաստան: Ըստ Սոկրատի` իր տուն է եկել Ռուդիկն ու ասել է, թե հայրը լիազորել է, որ վաճառի Ջրվեժի տունը: Գումարի մի մասը Ռուդիկը պիտի տաներ Ռուսաստան, մի մասը տար քրոջը` Սոկրատի կնոջը: Հետագայում Սոկրատն իմացել է, որ Ռուդիկը Ջրվեժի տան համար գնորդ է գտել ու ցանկանում է 3 հազար դոլարով վաճառել: Ինքը խորհուրդ է տվել, որ այդքան էժան չվաճառի տունը, որպեսզի հայրը կարողանա Ռուսաստանում տուն գնել: Այդ հարցի շուրջ վիճել է Ռուդիկի, նաեւ` իր կնոջ հետ: Հաջորդ օրը կինը հեռացել է իրենից: Մեկ շաբաթ անց իր տուն են եկել Ռուդիկը, նրա հորեղբոր եւ մորեղբոր որդիները: Նրանք առաջարկել են, որ իրենց երեք երեխաներից մեկին կինը վերցնի, մյուս երկուսը մնան իր մոտ: Ինքը չի ցանկացել, որ երեխաները բաժանվեն: Նրանք երեխաներին ու կնոջը տարել են Ձիլ գյուղ: Բայց այն ժամանակ ինքը չի իմացել` որտեղ են իր երեխաներն ու կինը: Երեք օր հետո է իմացել նրանց տեղը: Գնացել, վերադարձրել է իր տուն: Իմացել է, որ Ռուդիկը Ջրվեժում նշանվել է: Մի քանի օր հետո կինը նորից հեռացել է իրենից: Ինքը դարձյալ չի իմացել նրա տեղը: Գնացել է Ռուդիկի նշանածի տուն, բակից կանչել է Ռուդիկին, առաջարկել է բակ իջնել` խոսելու: Բակում զրուցել են: Ինքը հարցրել է` ինչո՞ւ է նա ուզում քայքայել իր ընտանիքը: Ռուդիկը վիրավորական արտահայտություններ է արել: Ինքը բարկացել ու խփել է նրան:

Ըստ Սոկրատի` Ռուդիկը բակ էր իջել դանակով, որով հարվածել է իր ձեռքին: Ինքը խփել, դանակը գցել է նրա ձեռքից: Իրենք էլ են ընկել գետնին: Ինքը չի հասկացել` դանակն ինչպես է մտել Ռուդիկի կողքը: Դրանից հետո ոտքի են կանգնել: Ինքը դանակը խրել է հողի մեջ, հավաքվածներին խնդրել է դանակը հեռացնել: Ռուդիկը տուն է մտել, ինքն էլ, վիրավոր լինելով, հեռացել է:

Սոկրատ Մ.-ն պնդել է, թե Ռուդիկի հետ վիճելիս շահադիտական դրդումներ չի ունեցել, հազար դոլարի պահանջ չի ներկայացրել: Դեպքից հետո մեկնել է Ռուսաստան: Ստացվում է` ինքը 15 տարի թաքնվել է, բայց այս գործով ինքն էլ է տուժող:

Կոտայքի մարզի դատարանը գործի քննության արդյունքում եզրահանգել է, որ ձեռք չեն բերվել արժանահավատ ապացույցներ, որ Սոկրատ Մ.-ն սպանությունը կատարել է շահադիտական դրդումներով:

Սոկրատ Մ.-ն մեղավոր է ճանաչվել քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով եւ ազատվել է քրեական պատասխանատվությունից` վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

Գողություն մեքենաներից

Հունվարի 27-ին Շենգավիթի ոստիկանության քրեական հետախույզները գողության վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ ստացան: Վաղ առավոտյան, ժամը 5-ի սահմաններում, ավտոմեքենայից մարտկոց գողանալու կասկածանքով, ոստիկանության Շենգավիթի բաժին բերման ենթարկվեց 40-ամյա Գագիկ Պետրոսյանը: Նա ոստիկաններին ներկայացրեց գողացված մարտկոցն ու հայտնեց, որ ժամը 3.30-ի սահմաններում գողացել է Չեխովի փողոցի մի շենքի մոտ կայանված ավտոմեքենայից:

Ոստիկանները պարզեցին տուժողի ինքնությունը, հրավիրեցին բաժին եւ հաղորդում ընդունեցին:

Հաջորդ օրը ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում ստացվեց ավտոմեքենայի մարտկոցի գողության հերթական ահազանգը: Անհայտ անձը գողացել էր Հովսեփյան փողոցում կայանված «Օպել»-ի էլեկտրական մարտկոցը:

Քրեական հետախույզներից քիչ ժամանակ պահանջվեց գողությունը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու համար: Շենգավիթի 14-րդ փողոցի տներից մեկից, գողությունը կատարելու կասկածանքով, բաժին բերման ենթարկվեց 26-ամյա Տիգրան Մինասյանը:

Խոստովանեց. մարտկոցը գողացել էր մեքենայի շարժիչի կափարիչը տեխնիկական միջոցներով բացելով:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Հետախուզվողներն արտահանձնվեցին

Սկիզբը` էջ 1

2017 թ. սեպտեմբերի 14-ին ոստիկանության ՊՊԳՎ կենտրոնական պահպանության բաժնի ոստիկաններից մեկը ահազանգել էր բաժին ու հայտնել, որ Թումանյան կենտրոնի մոտից կրակոցի ձայն է լսվում: Նույնաբովանդակ ահազանգ էր ստացվել նաեւ 911 ծառայություն: Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած տղամարդն էլ հայտնել էր, որ Թումանյան հյուրանոցի մոտ կայանված իր ավտոմեքենան կրակոցներից վնասվել է, ինքն էլ սրահում է:

Ահազանգերից րոպեներ անց քաղաքացիների հոսքը դեպքի վայրում արգելվեց. փորձաքրեագիտական ու քննչական գործողություններ էին կատարվում: Այդ պահի դրությամբ հայտնի էր, որ մի տղամարդ հրազենային վիրավորումով տեղափոխվել է հիվանդանոց: Վիրավորը Ալավերդու բնակիչ Վահագն Աբգարյանն էր:

Թումանյան հյուրանոցի մոտ հայտնաբերվեց տղամարդու դի` հրազենային վնասվածքներով: Սպանվածը Ալավերդի քաղաքի բնակիչ Գագիկ Մոսինյանն էր: Պարզվեց, որ միասին էին եղել, երբ նրանց ուղղությամբ կրակել էին, նաեւ որ հրազեն գործադրողները երեքն էին: Դեպքի վայրում հայտնաբերվեց «Ֆոլքսվագեն»: Նախնական տվյալներով` կասկածյալներն այդ մեքենայում էին եղել: Հանցագործությունից հետո, թողնելով մեքենան, ոտքով փախել էին: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեց «Կալաշնիկով» ինքնաձիգ` դատարկ պահունակով, «Մակարով» ատրճանակ` լիցքավորված 3 փամփուշտով, կրակված պարկուճներ:

Ժամերի ընթացքում ոստիկանության քրեական հետախուզության եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունների, նաեւ Երեւան քաղաքի ու Լոռու մարզային վարչությունների ծառայողները պարզեցին հանցագործությունը կատարած անձանց ինքնությունը` Երեւանի բնակիչ, 62-ամյա Ռաֆիկ Խաչատրյան, Ալավերդու բնակիչներ Ալբերտ Բլբուլյան եւ Արմեն Կարադավիդով:

Նրանց մեղադրանք առաջադրվեց ու հայտարարվեց հետախուզում: Սեպտեմբերի 22-ին ոստիկանները Կոտայքի մարզում հայտնաբերեցին 60-ամյա Ռաֆիկ Մկրտչյանին:

Վրաստանում հայտնաբերված ու Հայաստան տեղափոխված Ալբերտ Բլբուլյանին եւ Արմեն Կարադավիդովին ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները ներկայացրել են դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Թմրամիջոց Իրանից

Ոսփիկանությունը շարունակում է թմրանյութերի օգփագործման եւ անօրինական շրջանառության դեմ հեփեւողական պայքարը` համագործակցելով պեփական փարբեր կառույցների հեփ: Փոխգործակցության շնորհիվ Հայասփան ապօրինի թմրամիջոց ներկրելու հերթական դեպքը կանխվեց:

Հունվարի 17-ին ոսփիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները, պեփական եկամուփների կոմիփեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխափակիցների, ոսփիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Մեղրիի բաժնի ծառայողների հեփ, Մեղրիի մաքսակեփում Աբովյանի բնակիչ Տիգրան Գրիգորյանի ճամպրուկից հայփնաբերել են մեփամֆեփամին եւ մարիխուանա:

Տիգրան Գրիգորյանը թմրամիջոցները փորձում էր Իրանից մաքսանենգ ճանապարհով փեղափոխել Հայասփան, բայց իրավապահները կանխեցին:

Հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Ե՛վ օգտագործում էին, ե՛ւ հյուրասիրում

Թմրանյութերի օգտագործման, իրացման կամ անօրինական շրջանառության յուրաքանչյուր նոր դեպք արձանագրելիս ոստիկանությունն իրազեկում է հասարակությանը, ինչը կանխարգելիչ նպատակ ունի եւ ինքնին զգոնության կոչ է:

Օրերս հերթական բացահայտումը գրանցվեց Գյումրիում: Ոստիկանության Մուշի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ գյումրեցի Դավիթ Փափազյանը եւ Ոսկեհասկ գյուղի բնակիչ Խաչիկ Պարգեւյանը ապօրինի թմրանյութ են պատրաստում, պահում եւ օգտագործում:

Հունվարի 25-ին Գյումրիի Պարույր Սեւակի եւ Մովսես Խորենացու փողոցների խաչմերուկից Դավիթ Փափազյանն իր մեքենայով, ուղեւորուհի Նաիրա Հարությունյանի հետ, բերման ենթարկվեց ոստիկանության Մուշի բաժին: Փափազյանն իր բնակարանում ոստիկաններին ներկայացրեց պլաստմասսե տարայով կանեփի զանգված եւ կաթուցիչ:

Նույն օրը Մուշի բաժին բերման ենթակվեց նաեւ Խաչիկ Պարգեւյանը: Ոստիկաններն այցելեցին նաեւ նրա տուն, որտեղ Պարգեւյանը ներկայացրեց պոլիէթիլենային տոպրակի ու պայուսակի մեջ կանեփանման բույսի չորացված, մանրացված զանգվածներ: Ըստ նրա` մարիխուանա էր, որի հումքը քաղել էր բակում վայրի աճած կանեփի թփերից եւ չորացրել օգտագործելու համար: Իսկ միայնակ էր օգտագործելու, թե` ուրիշների հետ, դեռ պետք էր պարզել:

Իրավական առումով` օգտագործելը մի բան է, հյուրասիրելն` այլ: Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին, որ նույն օրը, ժամը 14-ի սահմաններում, Պարգեւյանն իր տանը Դավիթ Փափազյանին, Նաիրա Հարությունյանին եւ Մայիսյան գյուղի բնակիչ Արմեն Թորոսյանին մարիխուանա է հյուրասիրել:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Չարիք՝ մարդկության դեմ

Չնայած այն հանգամանքին, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ թմրամոլության հակազդումը համաշխարհային հանրության առաջնային խնդիրներից է, նույնիսկ՝ գերխնդիրներից, երեւույթի ահռելի չափերի հասնող ածը համաճարակի բնույթ է կրում:

Թմրանյութերի ապօրինի շրջանառությունը հանցաշխարհի եկամտաբեր աղբյուրներից է, եւ, ցավոք, սկիզբ է դնում նոր հանցագործությունների: Օրինակ, թմրանյութերի ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտը խթանում է զենք-զինամթերքի ապօրինի շրջանառությունը, ահաբեկչությունը եւ այլ հանցագործություններ:

Սպառման նոր շուկաների ստեղծումը առաջնային խնդիր է թմրանյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցախմբերի համար: Թմրամիջոցների ամենամեծ սպառողներից է Ռուսաստանի Դաշնությունը: Այն հաճախ նաեւ տարանցիկ երկիր է. Ռուսաստանով թմրանյութն անցկացնում են մասնավորապես Արեւելյան Եվրոպա: Իսկ եվրոպական երկրների միջեւ սահմանային հսկողության փաստացի վերացումը պարարտ հող է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցախմբերի համար:

Թմրամիջոցների փոխադրման տարանցիկ երկիր է Իրանի Իսլամական Հանրապետությունը: Այս երկրի տարածքով հսկայական քանակությամբ թմրամիջոցներ են տեղափոխվում Արեւմտյան Եվրոպա:

Թմրանյութ արտադրող եւ արտահանող հիմնական երկիրը Աֆղանստանն է. թմրանյութ կուտակող բազմաթիվ պահեստների առկայությունն այստեղ լուրջ մտահոգություն է թե՛ Իրանի, թե՛ Ռուսաստանի համար:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մշտապես աճում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցախմբերի թիվը եւ տեղափոխման ուղիները, ինչը բարդացնում է վերահսկման ու բացահայտման գործընթացը:

Թմրամիջոցների ավանդական տեսակներից բացի, այսօր մեծ պահանջարկ ունեն սինթետիկ թմրամիջոցները, որոնց համար պետք չեն ո՛չ հսկայական տարածքներ, ո՛չ աշխատուժ: Պատրաստումն իրականացվում է լաբորատորիաներում, բնակարաններում. քիչ աշխատուժ, կարճ աշխատաժամ եւ մեծ փողեր:

Մեծ քանակությամբ սինթետիկ թմրանյութ է արտադրվում Ռուսաստանի Դաշնությունում: Մտահոգիչ է պատկերը նաեւ մեր երկրում՝ տնայնագործական եղանակով սինթետիկ թմրանյութեր պատրաստելու առումով : Ճիշտ է, համեմատելով հարեւան երկրների հետ՝ մեզ մոտ, կարելի է ասել, կայուն վիճակ է, բայց խնդիրը հարեւան երկրների հետ համեմատվելը չէ, այլ թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխումը, հակազդումն ու դեպքերի հայտնաբերումը:

Խոսենք թվերով:

2018 թվականին իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել են 877 հանցագործության եւ 263 իրավախատման դեպքեր: Քրեական պատասխանատվության է ենթարկվել 785 անձ, որոնցից 17-ը՝ նախկինում դատապարտված, 29-ը՝ այլ երկրների քաղաքացի, 19-ը՝ կանայք, 3-ը՝ անչափահաս: Քրեական օրենսգրքի 266 հոդվածի (թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունը՝ դրանք իրացնելու նպատակով) հատկանիշներով քրեական պատասխանատվության է ենթարկվել 119 անձ: Ընդհանուր առմամբ՝ հայտնաբերվել եւ առգրավվել է 135 կգ 383 գրամ տարբեր տեսակի թմրամիջոց, 81 կիլոգրամից ավելի հոգեմետ նյութ:

Թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ ոստիկանության պայքարը խիստ է ու մշտական: Մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության աշխատակիցներն ամենօրյա, ամենժամյա պայքար են մղում մարդկությանն ուղղված չարիքի դեմ: Պարբերաբար անցկացվում են համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, տարվում են բացատրական աշխատանքներ՝ համագործակցելով իրավապահ այլ կառույցների, ԱՊՀ եւ միջազգային իրավապահ մարմինների հետ: Այդ միջոցառումների շրջանակում հայտնաբերվում է նաեւ ապօրինի պահվող զենք-զինամթերք, բացահայտվում են հանցագործություններ, հայտնաբերվում են հետախուզվողներ:

Բերենք օրինակ. «Կանեփ-կակաչ-2018» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման ընթացքում հայտնաբերվել եւ ոչնչացվել է 47 տոննա 810 կգ կանեփի եւ մոտ 37 կգ կակաչի զանգված, առգրավվել է մեծ քանակությամբ տարբեր տեսակի թմրամիջոց, զենք ու զինամթերք, հայտնաբերվել է 129 հետախուզվող, հարուցվել է 21 քրեական գործ:

Ներկայացնենք այս տարվա բացահայտումներից մի քանի դեպք:

Հունվարի 9-ի ուշ երեկոյան Գյումրիի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, այցելեցին Սպարտակի փողոցի տներից մեկը. 35-ամյա տանտերը կասկածվում էր թմրանյութ պատրաստելու եւ օգտագործելու, նաեւ իր տունը թմրարոջ դարձնելու մեջ:

Սիմոն Հակոբյանը ոստիկաններին մենակ «չդիմավորեց»: Հյուրեր ուներ. անհրաժեշտ պարագաները գնել ու հավաքվել էին «կոկորդիլոս» պատրաստելու եւ ներարկվելու համար: «Խոհարարն» էլ Սիմոնն էր:

Խուզարկությամբ հայտնաբերվեցին հումքն ու պատրաստի թմրանյութը: Սիմոնն ու հյուրերը՝ համաքաղաքացիներ Յուրիկ Մարկոսյանը, Աշոտ Ղուկասյանն ու Վրեժ Միքայելյանը, խոստովանեցին՝ թմրամոլ են: Դա հասկանալի էր: Անհասկանալին «կոկորդիլոս» կոչվող թույնով մարմիններին փտեցնելն էր:

Հունվարի 14-ին ապօրինի թմրաշրջանառության դեպք հայտնաբերեցին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները:

Նախկինում մի քանի անգամ դատապարտված Վարդգես Օհանյանն իր բնակարանը թմրարոջ էր դարձրել: Ոստիկանների այցելության պահին էլ հյուր ուներ՝ նախկինում դատապարտված Գեւորգ Գեւորգյանն էր: Նրանց ընկերությունը կալանավայրում էր սկսվել, հետո շարունակվել էր նաեւ ազատության մեջ: Խուզարկությամբ հայտնաբերվեցին օգտագործված ներարկիչներ, թմրանյութով տարա, «կոկորդիլոս» պատրաստելու պարագաներ:

Ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ օպերատիվ տեղեկություն էին ստացել ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները: Նրանց տեսադաշտում հայտնվեց 39-ամյա Սեւակ Բեգլարյանը, որը պետք է թմրամիջոց տեղափոխեր Իրանից: Քրեական հետախույզները կասկածյալին բռնեցին մայրաքաղաքի Սեւանի փողոցում եւ բերման ենթարկեցին ոստիկանություն: Խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց 47 գրամ ափիոն եւ 5 գրամ մարիխուանա:

Հունվարի 22-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները ապօրինի թմրաշրջանառության հերթական դեպքը բացահայտեցին: Վարդանանց փողոցում հայտնաբերեցին եւ կասկածանքով ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթակեցին մայրաքաղաքի բնակիչ Վաչագան Մուրադյանին: Խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց 15 գրամից ավելի ափիոն, թմրանյութով ներարկիչ եւ դանակ: 42-ամյա Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել: Նա կալանավորել է:

Թմրաշրջանառության ոլորտում շատ են ողբերգական հետեւանքները, իսկ հետեւություն անողներ գրեթե չկան: Ամեն մեկը այստեղ իր շահն ունի, իր շահագրգռվածությունը. մեկինը ֆինանսական է, մյուսինը՝ ֆիզիկական կամ՝ երկուսը միասին: Իսկ իրականությունը մեկն է՝ խաղ կյանքի ու մահվան միջեւ:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Քրեական օրենսգիրք. հոդված 266

1. Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) խոշոր չափերով,

3) ազատազրկման կամ կալանքի ձեւով պատիժը կրելու վայրերում կամ կալանավորվածներին պահելու վայրերում,

4) ուսումնադաստիարակչական հաստատությունում, զվարճանքի կամ հանդիսադիր վայրում կամ հաստատությունում՝ պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) կազմակերպված խմբի կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

4.1. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4.2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) կազմակերպված խմբի կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:

«Քարեգործական» խարդախություններ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները օպերատիվ ճանապարհով պարզել էին, որ Դիլիջանի բնակիչ Տիգրան Մինասյանը խոշոր չափերի գումարներ է հափշտակել:

Նախնական տվյալներով՝ նախորդ գարնանը Երեւանում ապրող մի գործարարի վստահեցրել էր, որ ֆինանսական մեծ կարողության տեր բարերար է, ցանկանում է օգնել Գյումրիի մանկատներից մեկին, սակայն փողը չի հերիքում, ուստի գործարարից, բարեգործություն կատարելու պատրվակով, իրականում՝ հափշտակելու դիտավորությամբ, պահանջել ու ստացել էր մեկ միլիոն դրամ:

Դարձյալ անցյալ տարի, այս անգամ՝ ամռանը, Տիգրան Մինասյանը ծանոթացել էր Կապանում ապրող մեկ այլ գործարարի հետ: Նրան ցույց էր տվել հուշանվեր թղթադրամներով լի ճամպրուկը: Ֆինանսական մեծ կարողության տեր անձնավորության տպավորություն թողնելուց հետո հայտնել էր, որ Իրանից ապրանք են ուղարկել, որը ստանալու համար պետք է դրամով վճարի: Եվ քանի որ մոտը հայկական արժույթ չուներ, այդ տղամարդուց պահանջել ու ստացել էր 850 հազար դրամ՝ հետո վերադարձնելու պատրվակով, սակայն չի վերադարձրել:

Խարդախությունների փաստերով ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել, որն ուղարկվել է քննչական կոմիտե:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Դանակահարություն Մասիսում

Հունվարի 25-ի լուսադեմին հիվանդանոցից ոստիկանության Մասիսի բաժին հաղորդում ստացվեց, որ աճուկային ծակած վերքով ու ներքին արնահոսությամբ բուժօգնության է ընդունվել 21-ամյա մի աղջիկ:

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ հունվարի 25-ին Մասիսի Հերացու փողոցում աղջկան սուր-կտրող-ծակող գործիքով խփել եւ մարմնական վնասվածք է պատճառել Երեւանում բնակվող, 21-ամյա Լիանա Հարությունյանը:

Ոստիկանները նրան հայտնաբերեցին եւ, դանակահարություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Մասիսի բաժին, որտեղ նա խոստովանեց արարքը:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՄԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հույն պատմագիր
Բանահյուս. տեսակ
Ուժի միավ. / Ֆլամանդ. նկարիչ
Վարչ-կենտրոն, Ֆրանսիա
Արու զավակ / Կայեն
Կապիկ
Հացկոտեմ / ... Խնկոյան
Ազնիվ մետաղ / Ծառ
«Մեծ ... զավակները»
Հրաբխային ապար
Իսպան. գրող, նոբելյան դափ.
Ածխաջրածին
Մատղաշ բույս
Ձկնորսի պիտույք
Արեւելյան տիրակալ / ... Շերենց
Մոնթե Լարավոր նվագարան
... Ջերսի
Բանջար
Ոստյուն
Քեն
Ձեթը հանելուց հետո մնացած չեչը
Վրացի ավատատեր / Մզկիթի աշտարակ
Ֆուտբոլիստների խումբ
«Փառասիրության տոնավաճառ»
Հոլանդ, փիլիսոփա
Հատուկ պատրաստականութ. զորք
«... ռուժ» / Ոտքի մաս
Ամենաջրառատ գետը / Հատկանիշ
Կակադու
Բուրդ
Իշամեղու / Բելառուս տպագրիչ
... Թադեւոսյան / Սկզբնակետ
Ծովային ուտելի կակղամորթ
Տուպոլեւ
... բերդ
Ոդիսեւսի որդին / Ուզբեկ. ըմբշամարտ
Կավե անոթ
Քաղաք, Սիցիլիա / Էգ թռչուն
Մաքսիմիլիան ... / Հունական տառ
Ջութակ
Նոտա
Ճավա կղզու թունավոր բույս
Ռուս կինոդերասան
Հին հուն. մարզ
... Բոներ / Փոքր մոլորակ / Մարմնի մաս
Սառը զենք / Հավի «մահճակալը»
Գետ, Ֆրանսիա / ... Ֆերգյուսոն
Կտորի շերտ
... Չապեկ / Դերանուն
Կիլիկ. հայ թագավոր / Սպաս
Կաթի երեսին
Սուրճի տեսակ
Արթիկի ... / Թեքված աշտարակ
Ռազմի աստված
... Մամիկոնյան / ... - Նովա
Յուպիտերի կինը
Բելառուսի ժող. բանաստեղծ
Քաղաք, Թունիս / Եվրոպ. ազգություն
Գերման. քիմիկոս
... Պալմաս
Անասնակեր / Գերանի ծեղքի մեջ
Բանվորի գործիք / «... Թադեուշ»
Միկոյան, Գուրեւիչ
Ճապոնական հագուստ
Մալուխ
Տարվա եղանակ
Հուն. քաղաք-պետություն
Ճահճուտի թռչուն
Խելացի
Գեր
Խոփի բացած փոսը
Կիր, ցեմենտ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 08.02 - 14.02

Խոյ - Ընկերների հետ հանդիպման ընթացքում կարող են ծնվել բիզնես ծրագրեր:

Ցուլ - Հավանական է հանդիպեք մեկին, որը կարեւոր տեղ ու դեր կունենա ձեր անձնական կյանքում:

Երկվորյակ - Վստահություն եւ հեղինակություն ձեռք բերելու հատկանիշը կօգնի գրավել ձեր սիրելիի սիրտը:

Խեցգետին - Փորձեք շատ չծիծաղել սիրելիի եզրակացությունների ու միամտության վրա: Գուցե իրոք նրան հաջողվել է ճանաչել ձեզ:

Առյուծ - Տխուր եւ միայնակ եք ձեզ զգալու, քանզի սիրելի անձնավորությունը չի փայլի իր վճռականությամբ ու շփվելու ցանկությամբ:

Կույս - Պրոֆեսիոնալ ոլորտում կծագեն փոքրիկ խնդիրներ, որոնք հեշտությամբ կհարթեք:

Կշեռք - Վտանգավոր կլինի խառնել անձնական եւ գործնական հարաբերությունները, ծառայողական սիրավեպ սկսելը:

Կարիճ - Եկամուտները կարող են զգալի աճել, չի բացառվում անսպասելի լուրջ գումարի ստացում:

Աղեղնավոր - Բավական բարենպաստ շաբաթ է ֆինանսական գործունեություն ծավալելու, գործարքներ կնքելու համար:

Այծեղջյուր - Ուղեւորությունները կարող են ռոմանտիկ երանգներ ստանալ: Շփումներում նախընտրելի է անկեղծությունը:

Ջրհոս - Խոսքերն ու գործողությունները կարեւոր դեր կխաղան հարաբերությունների զարգացման մեջ:

Ձուկ - Նպատակին հասնելու համար կդրսեւորեք աննմանագործ համառություն եւ վճռականություն:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.h6-e3 h2:f4 2.e3:a3x

Խնդիր N2 1.b8-g3 h2:d2 2.f2-g3 hf:f2 3.g1:a7x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 07.02.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: